

Ruby դասընթաց



«Ռուբիլաբս» ՄՊԸ հրավիրում է ձեզ մասնակցելու Ruby ծրագրավորման լեզվի 6-ամսյա դասընթացին:

Ծրագրում՝

- Ubuntu(Linux) օպերացիոն համակարգի հրամանային միջավայրի(command line) ուսումնասիրում
- Ծրագրավորման հիմունքների խորացված ուսումնասիրում Ruby լեզվի շրջանակներում
 - Փոփոխականներ, արտահայտություններ, համեմատություններ
 - Ֆունկցիաներ
 - Ցիկլեր
 - Տվյալների ներկայացման կոմպլեկս տեսակներ(String, Array, Hash, JSON)
 - Ալգորիթմներ(ընդհանուր բնութագիրը գործնական օրինակների հիման վրա)
 - Օբյեկտ-օրիենտացված ծրագրավորման հիմունքներ(OOP)
 - Օբյեկտներ
 - Տվյալների տեսակներ/դասեր
 - Տեսանելիության/հասանելիության տիրույթներ
 - Ֆայլերի հետ աշխատանք
- GIT-կողի վիճակի կառավարման համակարգ
- Ruby on Rails միջավայրի(framework) ուսումնասիրություն
 - HTML/CSS բազային մակարդակի վրա
 - WEB ծրագրավորման բազային գիտելիքներ
 - Տվյալների բազայի ուսումնասիրում

Դասընթացը յուրացնելուց հետո դուք կունենաք հստակ/գործնական պատկերացում ծրագրավորման (կոդավորման) մասին, կծանոթանաք տվյալների փոփոխության կառավարման ու վերահսկման եղանակներին օբյեկտ-օրիենտացված միջավայրում, ինչը գլխավոր սյունն է ծրագրավորման բոլոր միջավայրերի, տեսակների ու լեզուների մեջ:

Լավագույն արդյունքները ցուցաբերած ուսանողները կմիանան «Ռուբիլաբս» կազմակերպության թիմին:

Գրանցվելու համար համեցեք տեխնոպարկ. «Ռուբիլաբս»(209 սենյակ) կամ ԳՏՏԿ(102 սենյակ):

Եվ վերջում մի քանի խոսք Ruby լեզվի մասին:

- ✓ Բարձր մակարդակի ծրագրավորման լեզու
- ✓ Պարզ, մաքուր, ճկուն, ումանք կասեին՝ պոետիկ շարահյուսություն
- ✓ Իսկապես լիովին օբյեկտային կողմնորոշմամբ. թվերը օբյեկտներ են, անգամ ֆունկցիաներն են օբյեկտներ
- ✓ Ինքնաանալիզը ներդրված է հենց լեզվի մեջ:
- ✓ Հզոր մետածրագրավորումը հնարավորություն է տալիս գրել ծրագրային կոդ, որը կգեներացնի ծրագրային կոդ
- ✓ Օպերատորների սահմանումը նոր տիպերի համար շատ հեշտ է: Սահմանեք սեփական տիպեր ու հանգիստ կատարեք մաթեմատիկական գործողություններ նրանց արժեքների հետ
- ✓ Ֆունկցիան դեռ չկա՞: Ruby-ն այն կարող է ավելացնել ծրագրի աշխատանքի ընթացքում
- ✓ Ինտերպրետացվող լեզու: Խմբագրված կոդը ստուգելը շատ հեշտ է ու արագ
- ✓ Հիանալի WEB ծրագրային միջավայրեր. Ruby on Rails, Sinatra և ուրիշներ
- ✓ Վիթիարի գրադարան՝ պատրաստ օգտագործման: Հազվադեպ կարիք կլինի 0-ից ինչ-որ բան հավաքել

Դե՛, ոգևորե՛ց: Դուք հնարավորություն ունեք սովորելու ծրագրավորման լեզու, հատուկ մշակված ծրագրավորողների հարմարության համար, որը հարգում է ձեզ և, եթե տիրապետեք դրան, կարող է լավ հարստացնել ձեզ: